բաղկացած նշանագիրներն են որ հին դրամոց վրայ շատ կը տեսնուին ։

Ասոնցմէ դուրս երբոր դրամին վըրայ ետքէն քանի մը գրով տպաւորութիւն մը ըրած ըլլան, որով կ՚ուզեն իմացընել թէ դրամը կտրող տէրութիւնը նուաճուեր է, աս տեսակ նըշաններուն կրնանք ըսել Վերադրոշմ ։

Երբոր մէկը կ՚ուզէ մասնաւոր մէկ երկրի մը դրամներուն վրայ խօսիլ, կրնայ ան երկրին դրամոցը դասաւորութիւնը նոյն աշխարհքին և ազգին պատմութեանը ու փոփոխմանցը համեմատ բաժնել ։ Այսչափս հին դրամոց համար ։

ՍԵՐՈՎԲԷ Մ. ԱԼԻՇԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լեւոն Ե, և իր հրովարտակը ։

ՄԵՐ ազգին վերջի թագաւորներուն մէջ Լեւոն Ե Լուսինեան՝ Կիլիկիոյ թագաւորը՝ խիստ ցաւալիներէն մէկն է ։ Տասնըմէկ տարեկան տղայ էր թագաւորած ժամանակը, բայց իր անփորձ հասակին խոհեմ առաջնորդ ունեցեր էր Օշին պայլ քաջ իշխանը ։ Քանի որ անոր իմաստուն խրատներուն մտիկ կ՚ընէր, իր պզտիկ թագաւորութեան գործողութիւնները՝ ժամանակին դառն պարագաներուն նայելով՝ չափաւորապէս առաջ կ՚երթային . իսկ երբոր երիտասարդական անխոհեմութեը վրայ աւելցուց նաև ապերախտութիւնն ու անգթութիւնը, Օշին պայլը ըսպաննեց, ազգային իշխանները փոխեց, օտարազգի մարդկանց խօսքերուն չափէ դուրս հաւտաց, ան ատեն իր երկրին թշուառութիւններն ալ քանի գնացին սաստկացան, ինչուան որ ինքն ալ քսանումէկ տարի թագաւորելէն ետքը՝ առանց գովելի յիշատակ մը ձգելու մեռաւ 1342ին ։

Ահա աս ցաւալի թագաւորին մէկ յիշատակը ունինք որ հոս կը հրատարակենք, յուսալով որ ասիկայ հայրենասիրաց սրտին մէկ մխիթարանք ու նաև ուրախութի՛ մը ըլլայ ։ Վասն զի աս ճշմարիտ է որ ազգասէր մարդու մը համար՝ իր ազգայնոց պակասութիւնները միայն են ատելի, իսկ ազգայինքը միշտ սիրելի . ուրեմն ո՛րչափ ևս առաւել սիրելի պիտի ըլլայ իրեն իր ազգին թագաւորը, սոսկ իբրև Թագաւոր, և ոչ այսպիսի կամ այնպիսի թագաւոր ։ Եւ աս յիշատակն է մէկ հրովարտակ մը՝ որով մեր Լեւոն թագաւորը Սիկիլիացւոց ազատութիւն կուտայ որդւոց որդի, որ կարենան առանց տուրքի կամ մաքսի Կիլիկիայէն վաճառք հանել, ու հոն վաճառք մտցընել ։ Աս ալ գիտնալու է որ մեր Լուսինեան թագաւորներուն ետքինները Սիկիլիոյ թագաւորներուն հետ խնամութի՛ ունէին . և աս Լեւոն Ե թագաւորնիս Սիկիլիոյ Ռոբերտոս թագաւորին Կոստանդիա անունով աղջիկը իրեն կին առեր էր 1330ին, այսինքն ան տարին որ աս հրովարտակը տուեր է ։

Հրովարտակին գրուածքն է մաքուր բոլորգիր՝ իրեք թիզ երկայնութեամբ մագաղաթի վրայ, բոլորը քսանուիրեք տող . միայն մեր երկաթագիր տպած կտորները անոր մէջ ալ երկաթագիր են ։ Ոճը, ինչպէս որ կարդացողը կը տեսնէ, ան ատենի աշխարհաբառը, կամ թէ ըսենք՝ աւրուած գրաբառն է, օտարազգի բառերով խառն . ուղղագրութեը մէջ ալ սխալները շատ են, որ թերևս թագաւորական գրագիրներուն տգիտութենէն ըլլայ՝ քան թէ ատենադպրին կամ դիւանադպրին չգիտնալէն . մանաւանդ որ կ՚երևնայ թէ աս մագաղաթը բուն բնագիրը չէ, հապա բընագրին օրինակն է . որովհետև բնագիրները՝ ինչպէս որ ամէն տեղ սովորութիւն է՝ թագաւորական դիւանը կը պահուին ։ Մենք ուղղագրութեը խիստ յայտնի ու խոշոր սխալները միայն շտկելով հոս, նայեցանք որ հը-

բովարտակը ձիշդ հրատարակենք, ու միայն մութ տեղուանքը կարճ ծանօթութիւններով պարզենք։

ՅԱՆՈՒՆ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ԿԵՆԴԱՆԱՐԱՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ԱՄԷՆ։

ԼԵՒՈՆ Ի ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՇՆՈՐՀԱՒՔՆ

և ողորմութեամբ նորին Թագաւոր ամենայն Հայոց, որդի 'ի Քրիստոս հանգուցեալ արքային Հայոց Օշնի առաջնոյ, կարող և բարձր, 'ի պածառ և բարի արմատոյն Ռուբինաց։

Ծանուցանեմք ձեզ ամենեցուն որք այժմ էք և որք զկնի մեր գալոց էք. քանզի որպէս ուրէն և սովորութիւն է թագաւորաց բարեպաշտից 'ի Քրիստոս Աստուած հաւատացեալ երանելի նախնանցն մերոց և մեր, պատուել զամենեանն առ ոտս ձեր պարգևաւք զաւտարս և զընտանիս՝ յաստուածային առատաձեռնութեան պարգևացն որ տուեալ է մեզ 'ի վերուստ՝ այնոցիկ որ խնդիր ելանեն մերոց պարգևացն, նայ ըստ այսմ աւրինակի եկին առաջի մերոյ Թագաւորութեանս սիրեցեալ և ականաւոր բնակիչքն Սիծիլոյ և խնդրեցին պարգևս 'ի շնորհս մերոյ Թագաւորութենէս տարածանել յիւրեանքն առհասարակ. նայ վասն պածառ և երևելի իշխանին, շնորհաւքն Աստուծոյ Թագաւորին, և մեր պանծալի հաւրն Ռէֆտոկայ սիրոյն և հարկեցն՝ Ընդունեցաք զիւրեանց խնդրուածաքն. պարտ և արժան համարեցաք առնել իւրեանց շնորհս ըստ յուսոյն իւրեանց զոր խնդրեցին 'ի մերոյ Թագաւորութենէս, և պարգևեցաք ամէն Սիծիլիանոցն, որք են Սիծիլիանք և Սիծիլիանի որդիք, որք են և որք գալոց են, որ ըլին սիրածոյ, հարկևորածոյ, պահած ու նախախնամած՝ իւրեանքն իւրեանց անձներովն ու ըռըզակովն 'ի մեր Թագաւորութենէս և 'ի մեր ամենայն հնազանդելոյն. և ունայն[1] ազատութիւն, որ զինչ 'ի ծովէն 'ի յերկիրս մտցեն, և զինչ որ մեր յերկրէս 'ի ծովն հանեն ու տանեն, նայ զինչ գնեն ու ծախեն 'ի մեր ընթանուր աստուածապահս, նայ զայն որ կշեռք մտնէ՝ տան 'ի հարիւրէն երկու. այլ աւելի իրաւունք չտան. թողաք իրենցն. և զայն իրքն որ կշեռք չմտնէ, գնեն ու ծախեն. ազատ ըլի 'ի յամենայն ազգ հարկաց և իրաւանց. զարդի սմսարչէքն որ սմսարչէք մէն տան[2]. 'ի պաւման[3] որ աւտար նաւ կամ աւտար գէմի[4] մարդ կամ ըռըզակ չառնուն հետ իւրեանցն որպէս Սիծիլիան՝ խըլսեն[5] ու թէ գտնվի ովանէ այսպէս, նայ կորցընէ զիւր ազատութիւնն յաւիտեանս։ Եւ թէ ղալապայ[6] ըլի 'ի մեր յերկիրս հետ երկու Սծիլիայն, կամ որ մէկն հայ մարդ ըլի կամ ընդ այլ ազգ կամ արիւն, էնոր իրաւունքն և դատաստանն 'ի մեր դարպասն ըլի. և թէ Սծիլան սպանութիւն անէ 'ի մեր երկիրս՝ ժողովըրդեան և կամ Թախտան[7], թէ բուրճէս[8] ըլի մեր և կամ բնակիչ երկրիս որ երթայ զէն կրածն 'ի դարպասն ու գանկտի և յայտնէ զիւր զէնն զոր իրն[9] արած ըլին, նայ դարպասն կոչէ 'ի Սիծիլիանցն զով գտնու 'ի մեր երկիրս որ կենայ, ու Սծիլիանովն հաստատէ զպակասութիւնն զոր արել ըլին այն մարդուն, յայնժամ Սծիլիան պարտին որ գրեն թուղթ ու յըղըրկեն 'ի Սըծիլիան թէ այս անուն մարդ 'ի Փլան տեղ այս անուն մարդոյ 'ի Հայոց զէն արար, ու պակասութին այսչափ իրք. ապա տան տարի մի համբերութիւնն[10], կամ ըղըրկեն զէնն զոր արած ըլի,

1 Ունենան։
2 Այսինքն Հիմակուան վաճառքի միջնորդներուն իրաւունքը ինչ է նէ՝ ան միայն տան։
3 Ըս պայմանով։
4 Նաւ, գէմի։
5 Խալըսեն, ազատեն։
6 Կռիւ, խռովութիւն. ղավղա, գալապալըգ։
7 Թագաւորական պալատին։
8 Քաղաքացի. Պուրժ. bourgeois.
9 Իրեն, իւրն։ 10 Բանտ։

կամ զէնին անողն՝ որ գայ վճարէ զոր արած ըլլի ։ Ու թէ զէնին անողն մեռեալ ըլլի, նայ յուչիցն առնուն՝ ողորկեն զէնն զինչ արած ըլլին․ ու թէ յերբ յիմաց ըլլի իրանց Սծիլիանց 'ի Սծիլն՝ մինչ 'ի տարին չղըրկեն զէնն կմ̃ անուաղըն, ինչ Սծայեցիք կան յերկիրս՝ բռնուլին, որ վճարեն զէնն զոր արեըն ին Սծիլանքն մեր բնակչացն․ զոր կեցնվլի 'ի դարպաս, և իրենք իրեցեալ[1]՝ բնակիչքն Սծիլիանքն, որք են Սծիլիան, Սծիլիանի որդիք, որք են և որք գալոց են, բռնած ըլլին, պահել ընդդէմ մեզ հաւատարմատութիւն, և յետ մեր ժառանգաւորացն, յիմայ և յայսկից 'ի յետ ըղորդ և անարատ սէր և հաւատարմատութիւն իւրեանց ամենայն կարողութեամբն 'ի ծով և 'ի ցամաք, մեզ և մեր յերկիրս, ամէն ժողովրդեան յոր տեղ որ գտնվլին, իւրեանց ամէն կարողութիւն հաւատարմատութէ առանց ամէնազգ խաբէութեան ։ Յայսմհետէ չունի ոք իշխանութիւն 'ի թագաւորութեանս մերոյ ամենայն հնազանդեցելոցն 'ի մեծամեծաց մինչ 'ի փոքունս՝ մերոյ Թագաւորական բարձր հրամանիս հակառակ և կամ ընդդիմակաց կալ, կամ փառաւոր և սիրեցեալ բնակչացն Սծիլանոցն ուժ և կամ նեղութիւն առնել, կամ իրմէնցնէ աւելի հարկ կամ իրաւունք պահանջել․ այլ մնացէ հաստատուն ամենայն մի ըստ միոջէ որպէս վերոյ ենք շնորհել, առանց հակառակելոյ ումեքէ․ վասն որոյ պարգևեցաք իւրեանցն զմեր բարձր շքեղս և շնորհաւոր բրվլիճս[2]․ և յաղագս առաւել հաստատութէ ձեռնագրեցաք մերով Թագաւորական բարձր ձեռնագրեաւս, և կընքեցաք արքունական ոսկի վուլոմս[3] 'ի փառս անեղին Աստուծոյ․ ամէն ։

Գրեցաւ 'ի թվականութէ մարդեղէնալոյն Քրիստոսի յուսոյն մերոյ ՌԳԾԼ․ 'ի Հայոց մեծաց թուիս ՉԶ․ 'ի յընիքոնիս Հռոմոց ԺԷ․ և յամսեան նուեմբերի ԻԴ․ 'ի ջանլերութեան[1] Յանէսիրիցանց և արքայհայրութեան Սաղի ծառայի Աստուծոյ և շնորհողի այսմ վերնոյ գրեալ պարգևացս ։

✠ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ։

1 Գուցէ սիրեցեալ ։
2 Արտօնութիւն : Իտալ․ Privilegio.
3 Կնիք : Լտ․ Bulla.

1 Ատենադպրութիւն : Գ․ղ․ Chancellerie.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԻՆՉՊԷՍ քաշուածքը կամ պատկերը կենդանութիւն կուտայ պատմութեան, այսպէս ալ երգը․ վասն զի երկուքն ալ բանաստեղծութիւն են․ և ազգային պատմութեան աս կերպով կենդանութիւն տուող պատկերներն ու երգերը որչափ որ հին ըլլան, այնչափ ալ աւելի ախորժելի կ'ըլլան ազգասիրաց ։ Ահա աս գիտնալով մենք ալ, օրագրիս մէջ փափաք ցըցուցեր էինք ազգային ռամկական երգեր ունենալու որ հրատարակենք, ու մասնաւորաց քով գրեթէ անծանօթ թաղուած գանձերը՝ կերպով մը հասարակաց վայելելու հարստութիւն դարձընենք ։ Աս մեր փափաքին ինքնայօժար բարեսրտութբ̃ կատարող ու զօրաւոր գործադիր գտանք ազնիւ և ուսումնական պարոն Գալուստը Շիրմազանեան Սարգանեանց, որ ծննդեամբ հին Ջուղայէն ըլլալով, և հիմակ ալ իր հայրենեացը սահմաններէն շատ հեռու չգտնուելով, այսինքն Տփխիս, քանի մը ազգային երգեր հաւաքեր ու մեզի խրկեր է, խոստանալով որ ուրիշ ալ խրկէ հետզհետէ ։ Մենք հոս հրապարակաւ մեր շնորհակալութիւնը յայտնելէն ետքը, ահա ան երգերուն մէկը կը հրատարակենք, և կը յուսանք որ ազգասէր ընթերցողք ալ իրենց գովեստին և շնորհակալութեանը արժանաւոր համարին զինքը ։